ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N 22/02-Թ

10.01.2022թ

ք.Արտաշատ

ՀՀ Արարատի մարզպետարանը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա /այսուհետև Նվիրատու/ մի կողմից և ՀՀ Արարատի մարզի Պարույր Սևակի տուն-թանգարան ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Սևակ Ղազարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա /այսուհետև Նվիրառու/ մյուս կողմից, հիմք ընդունելով «2022թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով պատվիրատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վերապահված լիազորությունները պատշաճ կատարելու նպատակով, կատարողին տրամադրում է 9282,1 ինն միլիոն երկու հարյուր ութսուներկու հազար հարյուր ՀՀ դրամ «2022 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի բյուջետային ծախսերի (ըստ դասիչների) 1075 ծրագրի2 «Մշակութային ժառանգության ծրագիր» 11004 «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» հատկացումներն օգտագործել «Պարույր Սևակի անվան տուն թանգարան» ՊՈԱԿ-ի 2022թ. հաստատված ծախսերի նախահաշվին համապատասխան:

2. Նվիրատուն վճարումները իրականացնում է ՀՀ պետական բյուջեով հաստատված եռամսյակային համամասնությունների շրջանակներում:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Սույն պայմանագրով սահմանված պայմանների չկատարման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր համաձայնագիր կնքելու միջոցով:

3.2 Սույն պայմանագիրը իրավաբանական ուժ է ստանում կնքման պահից և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 25-ը:

3.3 Սույն պայմանագիրը կազմված է մեկ էջից, գրված է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՎԻՐԱՏՈՒ	ՆՎԻՐԱՌՈՒ
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	Պարույր Սևակի տուն-թանգարան
ք. Արտաշատ, Օգոստոսի 23/60	ՀՀ ֆինանսների նախարարության գ/վ
Ֆին. նախ. Գործառ. Վարչ.	Հ/Հ 900428000278
900411068027	ՀՎՀՀ 04105615
	Տնօրեն՝
Գլխավոր քարտուղար՝	
Ա. Մկրտչյան	Ս. Ղազարյան
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.